ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2014 թվականի N 127 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎԱԾ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 18/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու 2011 թվականի փետրվարի 4-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 15-Ա որոշմամբ, համայնքի սեփականություն հանդիսացող Մազմանյան փողոց N 18/6 հասցեի 220,0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար սահմանվել է մեկնարկային գին և օրենքով սահմանված կարգով այն օտարվել է: Սակայն հետագայում, տան նախագծման աշխատանքների ժամանակ պարզվել է, որ առանձնացված 220,0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը ամբողջովին հնարավոր չէ օգտագործել, քանի որ առանձնացված հողամասի պետական գրանցման համար հիմք հանդիսացող չափագրումը կատարվել է ոչ ճիշտ, որի պատճառով այն համադրվել է այլ հողամասի և գույքի հետ: Հողամասը բաժանվել է երկու առանձին մասերի՝ 170,10 (հարյուր յոթանասուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր և 49,90 (քառասունինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսներով և տրվել են հասցեներ համապատասխանաբար՝ Մազմանյան փողոց N 18/10 և Մազմանյան փողոց N 18/6:

Հողամասի սեփականատեր քաղաքացի Մարիամ Բաղդասարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին (դիմումը՝ գրանցված քաղաքապետարանում 2014 թվականի սեպտեմբերի 19-ին, № 8459 թվագրմամբ) առանձնացված 170,10 (հարյուր յոթանասուն ամբողջ մեկ տասնրորդական) քառակուսի մետր մակերեսով Մազմանյան փողոց N 18/10 հասցեի հողամասը համայնքին վերադարձնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2011 թվականի փետրվարի 4-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 15-Ա որոշման ցուցակի 13-րդ կետի 3-րդ սյունակի «220,0» թիվը փոխարինել «49,90 (քառասունինն ամբողջ ինը տասնորդական)» թվով և բառերով:

2. Սահմանել, որ որոշմանը հաջորդած մյուս իրավական ակտերը փոփոխվում են Գյումրի համայնքի ղեկավարի որոշումներով:
3. Մազմանյան փողոց N 18/10 հասցեի 170,10 (հարյուր յոթանասուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը հետ վերցնել համայնքի հաշվեկշիռ և սեփականատիրոջը տալ փոխհատուցում:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» սեպտեմբերի 2014 թ.